

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկը

«Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից տրամադրվող Ապառիկ ֆինանսավորման համար տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հիմք ընդունելով հետևյալ բանաձևը

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{\left(1 + i\right)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի վարկավորման ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում,

A – տրամադրվող վարկի պայմանագրային գումարն է,

n – սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող միջնորդավճարի) հերթական համարն է,

N – վարկի մարմանն (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված միջին վճարի համարն է՝ ներառյալ նաև վարկի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո պարտավորությունները համարվում են մարված,

K_n – սպառողի կողմից վարկի ստացման պահին և (կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումարն է (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ,

D_n – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ